№ 223 Դեկտեմբերի 21 **1879** Դեկտեմբերի 21 № 223

ՈՒԹԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Տարեկան գինը 10 ռուբլ կէս տարվանը 6 ռուբլ։ Առանձին համարները 5 կոպէկով։

Թիֆլիսում գրվում են միմիայն խմբագրատան մէջ։

Օտարաքաղաքացիք դիմում են ուղղակի Тифлисъ. Редакція „Мшакъ“

ՄՇԱԿ

Խմբագրատունը բաց է առաւօտեան 10—2 ժամ (Բացի կիրակի և տօն օրերից)

Յայտարարութիւն ընդունվում է ամեն լեզուով։

Յայտարարութիւնների համար վճարում են իւրաքանչիւր բառին 2 կոպէկ։

„ՄՇԱԿ“
ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԼՐԱԳԻՐ
1880 թվին

ԿԸ ՀՐԱՏԱՐԱԿՎԻ ԱՄԵՆ ՕՐ, բացի տօն և տօների հետևեալ օրերից։

Լրագրի դիրքը և պրոգրամմեն նոյն են մնում։ Մենք ստանում ենք ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ։ «ՄՇԱԿԻ» տարեկան գինը 10 ռուբլ է, կէս տարվան 6 ռուբլ։ Գրվել կարելի է ՄԻԱՅՆ ԽՄԲԱԳՐԱՏԱՆ մէջ։

ԱՌԱՆՁԻՆ ՀԱՄԱՐՆԵՐԸ ծախվում են 5 կոպէկով հատը։

Օտար քաղաքներից պէտք է դիմել հետևեալ հասցէով ТИФЛИСЪ Редакція «Мшакъ.

Խմբագիր—Հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Անդրկովկասի տնտեսական դրութիւնը։—Ներքին տեսութիւն։ Ներքին լուրեր։—Արտաքին տեսութիւն։ Աւստրո-Ունգարիա։ Ամերիկա։ Նամակ Թիւրքիայից։ Նամակ Պարսկաստանից։—«Մշակի» հեռագիրներ։—Յայտարարութիւններ։—Բանասիրական։ Էջմիածնի տնտեսական դրութիւնը։

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Ինչպէս յայտնեցինք մեր ընթերցողներին, նորերումս հրատարակվեցաւ Թիֆլիսում մի ռուսերէն գիրք «Երևանեան նահանգի տնտեսական նկարագիր» (Экономическ. очерки Эрив. губ.) վերնագրով։ Գրքի հեղինակը պ. Սաղաթէլեանն է, որ երևում է թէ մեծ աշխատանք է գործ դրել Երևանեան նահանգի տնտեսական դրութեան մասին տեղեկութիւններ հաւաքելու համար։ Գիրքը արժանի է ընթերցասիրութեան. նրանից ընթերցողը կը ծանօթանայ որքան հարուստ է ռուսաց Հայաստանը բնական արդիւնքների կողմից, որքան առատ և բերրի է հողը Երևանեան նահանգում, որքան բազմատեսակ թէ բոյսեր և թէ կենդանիներ առաջարկում է մարդուն այն երկիրը, որ եղել է մարդկութեան օրօրոց։ Բայց ուրիշ կողմից մենք գրքից պարզ տեսնում ենք թէ որքան դեռ անելու կայ մեր երկիրներում... Որքան գետիններ, թէ ջրի պակասութեան պատճառով, թէ ուրիշ կողմից ճահիճներով ծածկված լինելով, ապարդիւն կերպով կորչում են երկրագործութեան համար։

Հեղինակը շատ իրաւացի է նկատում որ Երևանեան նահանգը ոչ թէ միայն Անդրկովկասի, բայց և ամբողջ ռուսաց պետութեան մէջ ամենաբերրի և ամենահարուստ երկիրներից մինը կարող է համարվել։ Երևանեան նահանգը իր բնական հարստութիւններով պակաս չէ Անդալուզիայից, Շամպանից, Լյոնասից կամ Լոթարինգիայից։ Բայց մինչդեռ վերև յիշված երկիրներում երկրագործը, օգուտ քաղելով բնութեան բոլոր պարգևներից, մեծ բարօրութեան մէջ է ապրում, Երևանեան նահանգի և ամբողջ Անդրկովկասի երկրագործը, նոյնքան և գուցէ աւելի հարուստ երկրում ապրելով, հազիւ հազ կարողանում է ծածկել ծախսերը հողից ստացվող ողորմելի արդիւնքներով, իսկ շատ անգամ կատարեալ չքաւորութեան մէջ է ապրում և ընկնում է անվճարելի պարտքերի մէջ.... Ո՞վ կը մտածէր, օրինակ, որ Երևանեան նահանգի պէս հարուստ երկրում կարող է պատահել այս տարվայ պէս առաջին պիտոյքի անասելի թանգութիւն և գրեթէ սով, մինչև այն աստիճան միայն անցեալ 1878 թվի լիակատար հաշիւը։ Կամ պէտք էր յիշեալ 11 տարիները բոլորովին բաց թողնել, կամ նրանց ելևմտական շրջաբերութիւնների մասին կանոնաւոր տեղեկութիւն տալ։ Բայց ոչ, Էջմիածնի սխրագործութիւնները երևան հանելու համար չէր կարելի բոլորովին բաց թողնել 11 տարիները, գոնէ նրանց մէկ կողմը պէտք էր ցոյց տալ, որ «Արարատի» արտասանութեան համեմատ «գործերը և աշխատութիւնները բարբառէին և (ուրիշների) խօսքերը սպառվէին»... Նախ տեսնենք, թէ ինչ գործեր և աշխատութիւններ են կատարվել այս 11 տարիների ընթացքում, յետոյ կանցնենք 1878 թվի հաշիւին։

Յիշեալ 11 տարիների հաշիւների մէջ մեր ուշադրութիւնը գրաւում են մի քանի կէտեր։ Ջանգան շինութիւնների վրա ծախսվել է 159,952 ռուբլի հետևեալ կարգով.

Ճեմարանի շինութեան և վերաշինութեան վրա 96,319 ռուբլի, կահկարասիքի և դասագրքերի 6,643 ր., պահարանների շինութեան 12,390 ր., Դալմայի առուին 11,314 ր., Բիւրականի ամբարանոցին 13,040 ր., Ճեմարանի հիւանդանոցին 5,245 ր., լճի, անտառի և այլն 15,000 ր.։ Գումար 159,952 ռուբլի։

Վերոյգրեալ խոշոր ծախսերի առջև մուտք է ցոյց տված, որ հաւաքվել է ճեմարանի շինութեան և Էջմիածնի վերանորոգութիւնների անունով եղած նուիրատուութիւններից 41,645 ր.։

Եթէ մուտքը ծախսից դուրս գանք, կը նշանակէ, որ Էջմիածինը մուտքից աւելի է ծախսել 118,307 ռուբլի։

Բայց ո՞րտեղից է գտել վերջին գումարը,—կամ պէտք է պարտք արած լինի, կամ պէտք է ուրիշ արդիւնքներ և մուտքեր ևս ունեցած լինի, որոնք ամենևին յիշված չեն։ Վերջինը աւելի հաւանական է, որովհետև մեզ յայտնի են մի քանի խոշոր գումարներ, որոնք յիշեալ 11 տարվայ ընթացքում մուտք են գործել Էջմիածնի գանձարանում և նրանց մասին ամենևին յիշատակութիւն չը կայ։ Օրինակ, չէ յիշված ճաշոցներից և ձայնագրեալ չարականներից գոյացած փողը, որ մօտաւորապէս 200,000 ռուբլի կը լինի. չէ յիշված Սէրովբէ եպիսկոպոսի փողը, որ 70,000 ռուբլի էր. չէ յիշված Կարապետ եպիսկոպոսի փողը, որ, կարծեաք, 36,000 ռուբլի էր. չէ յիշված Հնդկաստանից միանգամ թէհրանի ռուսաց դեսպանատան միջնորդութեամբ ստացված մի կտակի փող, որ 44,000 ռուբլի էր. չէ յիշված Գրիգորիս եպիսկոպոսի միջնորդութեամբ դարձեալ Հնդկաստանից ուղարկված կտակների փողերը, որոնց 50,000 ռուբլին միայն մեզ յայտնի է. չեն յիշված և մի քանի ուրիշ գումարներ, որոնց ճշտութիւնը ստուգութեան կարօտ լինելով, թողնում ենք։ Իսկ միայն այս վերոյգրեալ բաց թողված մուտքերի գումարը լինում է 400,000 ռուբլի։ Եթէ աւելացնենք դրա վրա ճեմարանի շինութեան անունով հաւաքված նուիրատուութիւնների գումարը 41,645 ռուբլի, ամբողջը կը լինի 441,645 ռուբլի։

Ուրեմն խոշոր-խոշոր ծախսերը մի առ մի գրել հաշիւ մէջ, իսկ եկամուտների մեծ մասը բաց թողնել,—մի այսպիսի համարատուութիւնով մենք չենք կարծում, որ «գործերը և աշխատութիւնները կը բարբառէին, իսկ հասարակութեան տրտունջները կը սպառվէին»...

Ընթերցողը տեսնում է, որ վերոյիշեալ մուտքերը այնպիսի պատահական և արտաքոյ կարգի արդիւնքներ են, որ ամենևին կապ չունեն Էջմիածնի հաստատ և մշտական արդիւնքների հետ, որոնք, որպէս երևում է 1878 թվի հաշիւից, Էջմիածնի ընդհանուր ծախսերը լրացնելուց յետոյ, դարձեալ ամեն տարի մօտ 40 հազար ռուբլի աւելորդ փող են թողնում գանձարանին։ Դա այժմ ուրանալ չէ կարելի, որովհետև հաշիւը մեր աչքի առջևն է, և միակ հաշիւն է, որ ամբողջապէս տպված է. (մենք թւանշանների ճշտութեան մասին չենք խօսում)։

1878 թվին Էջմիածինը մուտք է ունեցել.

Աթոռապատկան արդիւնքներից 75,173 ռուբլի։ Վիճակապատկան արդիւնքներից 22,132 ռուբլի։ Տպագրական արդիւնքներից 19,964 ր.։ Գումարն 117,271 ր.։

1878 թվին Էջմիածինը ծախք է ունեցել. Վիճակների վրա 2,619 ր., տպարանի վրա 5,922 ր., վանքի տնտեսութեան վրա 45,401 ր., ճեմարանի տնտեսութեան վրա 25,131 ր.։ Գումարն 79,073 ռուբլի։

Ծախքը մուտքից դուրս գալով մնում է զուտ արդիւնք 38,198 ր.։

Ուրեմն, Էջմիածինը իսան այժմ այն աստիճան ապահովացրել է, որ առանց դրսից օգնութիւն ստանալու, կարող է իր հաստատ և մշտական արդիւնքներով իր ծախսերը ծածկել, և ամեն տարի գանձարանում 40 հազար ռուբլի փող աւելացնել։

Բայց այստեղ մի նուրբ հաշուագիտական հարց է բարձրանում, որը պէտք է պարզել.—արդեօք նախնթաց 11 տարիներում, այսինքն, սկսեալ այն օրից, որ Վեհափառ Հայրապետը մուտք է գործել Էջմիածնում, մինչև 1878 թիւը Էջմիածինը միշտ ունեցել է իւրաքանչիւր տարի 40 հազար ռուբլի զուտ արդիւնք, և եթէ ունեցել է, որտեղ են մնացել այն փողերը, որոնք 11 տարվայ ընթացքում տօկոսով աւելի քան կէս միլիօն ռուբլի գումար կը կազմէին։ Այդ տարակուսութիւնը փարատում է ինքը «Արարատ» ամսագիրը, ցոյց տալով, որ առաջ Էջմիածնի ծախսերը աւելի փոքր էին, օրինակ, 1867—68 - 69 թվերում Էջմիածնի տարեկան ծախսը եղած է 25 հազարից մինչև 35 հազար ռուբլի, բայց սկսեալ 1870 թվից մինչև 1878 թվի վերջը, հետզհետէ բարձրանալով, հասած է 76.000 ռուբլու։ Դա շատ հաւանական է, որովհետև վերջին տարիներում աւելացել են ճեմարանի տնտեսութեան ծախսերը, որոնք առաջ չը կային։ Հիմայ հարցը պարզվում է։ Եթէ Էջմիածինը իր բազմաձև տարվայ մէջ (1878 թուում, որի հաշիւը տեսանք) կարողացել է իր բոլոր ծախսերը ծածկելէն յետոյ դարձեալ 40 հազար ռուբլի զուտ արդիւնք ունենալ, ուրեմն,

---

ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԷՋՄԻԱԾՆԻ ՏՆՏԵՍԱԿԱՆ ԴՐՈՒԹԻՒՆԸ

—

Վաղուց է, որ մեր լրագրութիւնը հարց բարձրացրեց, թէ Մայր Աթոռի կառավարութիւնը պէտք է հաշիւ ներկայացնէ ազգին, որպէս այդ ընդունված է մինչև անգամ պետութիւնների և առհասարակ այն հիմնարկութիւնների վերաբերութեամբ, որոնք մի առանձին պատասխանատուութիւն ունեն դէպի ժողովուրդը, և որոնց ու ժողովրդի մէջ կայ փոխադարձ համերաշխութիւն։ Լրագրութեան այդ իրաւացի բողոքը երկար ժամանակ մնաց առանց հետևանքի և Էջմիածնի կառավարութիւնը շարունակեց յամառութեամբ լռել։ Վերջապէս «Արարատ» ամսագրի հոկտեմբեր ամսի համարի մէջ, Վեհափառ Հայրապետի հրամանով և տնօրինութեամբ, տպված է մի հաշիւ։ Ուրախ ենք, որ ժողովրդի պահանջը, եթէ ոչ կատարելապէս, գոնէ մասամբ բաւականութիւն ստացաւ։ Ասում ենք մասամբ, որովհետև հաշիւը թերի է։ Մենք չենք խօսում այն բանի վրա, որ հաշիւ մէջ երևում է այն տեսակ խառնափնթորութիւն, որ բոլորովին զուրկ է կանոնաւոր տօմարակալութեան ճշտութիւնից, այլ այն, որ նա շատ բաներ մութի մէջ է թողնում և լիովին չէ բաւականացնում մեր հարցասիրութիւնը։

Ահա որ մասի մէջն է թերութիւնը.

Սկսեալ 1867 թիւ ապրիլի 7-ից (այսինքն այն օրից. որ Վեհ. Հայրապետը մուտք է գործել Էջմիածնում) մինչև 1878 թիւը, 11 տարվայ հաշիւների վրա հարևանցօրէն անցնելով, ներկայացրած է միայն անցեալ 1878 թվի լիակատար հաշիւը։ Կամ պէտք էր յիշեալ 11 տարիները բոլորովին բաց թողնել, կամ նրանց ելևմտական շրջաբերութիւնների մասին կանոնաւոր տեղեկութիւն տալ։ Բայց ոչ, Էջմիածնի սխրագործութիւնները երևան հանելու համար չէր կարելի բոլորովին բաց թողնել 11 տարիները, գոնէ նրանց մէկ կողմը պէտք էր ցոյց տալ, որ «Արարատի» արտասանութեան համեմատ «գործերը և աշխատութիւնները բարբառէին և (ուրիշների) խօսքերը սպառվէին»... Նախ տեսնենք, թէ ինչ գործեր և աշխատութիւններ են կատարվել այս 11 տարիների ընթացքում, յետոյ կանցնենք 1878 թվի հաշիւին։

Յիշեալ 11 տարիների հաշիւների մէջ մեր ուշադրութիւնը գրաւում են մի քանի կէտեր։ Ջանգան շինութիւնների վրա ծախսվել է 159,952 ռուբլի հետևեալ կարգով.

Ճեմարանի շինութեան և վերաշինութեան վրա 96,319 ռուբլի, կահկարասիքի և դասագրքերի 6,643 ր., պահարանների շինութեան 12,390 ր., Դալմայի առուին 11,314 ր., Բիւրականի ամբարանոցին 13,040 ր., Ճեմարանի հիւանդանոցին 5,245 ր., լճի, անտառի և այլն 15,000 ր.։ Գումար 159,952 ռուբլի։

Վերոյգրեալ խոշոր ծախսերի առջև մուտք է ցոյց տված, որ հաւաքվել է ճեմարանի շինութեան և Էջմիածնի վերանորոգութիւնների անունով եղած նուիրատուութիւններից 41,645 ր.։

Եթէ մուտքը ծախսից դուրս գանք, կը նշանակէ, որ Էջմիածինը մուտքից աւելի է ծախսել 118,307 ռուբլի։

Բայց ո՞րտեղից է գտել վերջին գումարը,—կամ պէտք է պարտք արած լինի, կամ պէտք է ուրիշ արդիւնքներ և մուտքեր ևս ունեցած լինի, որոնք ամենևին յիշված չեն։ Վերջինը աւելի հաւանական է, որովհետև մեզ յայտնի են մի քանի խոշոր գումարներ, որոնք յիշեալ 11 տարվայ ընթացքում մուտք են գործել Էջմիածնի գանձարանում և նրանց մասին ամենևին յիշատակութիւն չը կայ։ Օրինակ, չէ յիշված ճաշոցներից և ձայնագրեալ չարականներից գոյացած փողը, որ մօտաւորապէս 200,000 ռուբլի կը լինի. չէ յիշված Սէրովբէ եպիսկոպոսի փողը, որ 70,000 ռուբլի էր. չէ յիշված Կարապետ եպիսկոպոսի փողը, որ, կարծեաք, 36,000 ռուբլի էր. չէ յիշված Հնդկաստանից միանգամ թէհրանի ռուսաց դեսպանատան միջնորդութեամբ ստացված մի կտակի փող, որ 44,000 ռուբլի էր. չէ յիշված Գրիգորիս եպիսկոպոսի միջնորդութեամբ դարձեալ Հնդկաստանից ուղարկված կտակների փողերը, որոնց 50,000 ռուբլին միայն մեզ յայտնի է. չեն յիշված և մի քանի ուրիշ գումարներ, որոնց ճշտութիւնը ստուգութեան կարօտ լինելով, թողնում ենք։ Իսկ միայն այս վերոյգրեալ բաց թողված մուտքերի գումարը լինում է 400,000 ռուբլի։ Եթէ աւելացնենք դրա վրա ճեմարանի շինութեան անունով հաւաքված նուիրատուութիւնների գումարը 41,645 ռուբլի, ամբողջը կը լինի 441,645 ռուբլի։

Ուրեմն խոշոր-խոշոր ծախսերը մի առ մի գրել հաշիւ մէջ, իսկ եկամուտների մեծ մասը բաց թողնել,—մի այսպիսի համարատուութիւնով մենք չենք կարծում, որ «գործերը և աշխատութիւնները կը բարբառէին, իսկ հասարակութեան տրտունջները կը սպառվէին»...

Ընթերցողը տեսնում է, որ վերոյիշեալ մուտքերը այնպիսի պատահական և արտաքոյ կարգի արդիւնքներ են, որ ամենևին կապ չունեն Էջմիածնի հաստատ և մշտական արդիւնքների հետ, որոնք, որպէս երևում է 1878 թվի հաշիւից, Էջմիածնի ընդհանուր ծախսերը լրացնելուց յետոյ, դարձեալ ամեն տարի մօտ 40 հազար ռուբլի աւելորդ փող են թողնում գանձարանին։ Դա այժմ ուրանալ չէ կարելի, որովհետև հաշիւը մեր աչքի առջևն է, և միակ հաշիւն է, որ ամբողջապէս տպված է. (մենք թւանշանների ճշտութեան մասին չենք խօսում)։

1878 թվին Էջմիածինը մուտք է ունեցել.

Աթոռապատկան արդիւնքներից 75,173 ռուբլի։ Վիճակապատկան արդիւնքներից 22,132 ռուբլի։ Տպագրական արդիւնքներից 19,964 ր.։ Գումարն 117,271 ր.։

1878 թվին Էջմիածինը ծախք է ունեցել. Վիճակների վրա 2,619 ր., տպարանի վրա 5,922 ր., վանքի տնտեսութեան վրա 45,401 ր., ճեմարանի տնտեսութեան վրա 25,131 ր.։ Գումարն 79,073 ռուբլի։

Ծախքը մուտքից դուրս գալով մնում է զուտ արդիւնք 38,198 ր.։

Ուրեմն, Էջմիածինը իսան այժմ այն աստիճան ապահովացրել է, որ առանց դրսից օգնութիւն ստանալու, կարող է իր հաստատ և մշտական արդիւնքներով իր ծախսերը ծածկել, և ամեն տարի գանձարանում 40 հազար ռուբլի փող աւելացնել։

Բայց այստեղ մի նուրբ հաշուագիտական հարց է բարձրանում, որը պէտք է պարզել.—արդեօք նախնթաց 11 տարիներում, այսինքն, սկսեալ այն օրից, որ Վեհափառ Հայրապետը մուտք է գործել Էջմիածնում, մինչև 1878 թիւը Էջմիածինը միշտ ունեցել է իւրաքանչիւր տարի 40 հազար ռուբլի զուտ արդիւնք, և եթէ ունեցել է, որտեղ են մնացել այն փողերը, որոնք 11 տարվայ ընթացքում տօկոսով աւելի քան կէս միլիօն ռուբլի գումար կը կազմէին։ Այդ տարակուսութիւնը փարատում է ինքը «Արարատ» ամսագիրը, ցոյց տալով, որ առաջ Էջմիածնի ծախսերը աւելի փոքր էին, օրինակ, 1867—68 - 69 թվերում Էջմիածնի տարեկան ծախսը եղած է 25 հազարից մինչև 35 հազար ռուբլի, բայց սկսեալ 1870 թվից մինչև 1878 թվի վերջը, հետզհետէ բարձրանալով, հասած է 76.000 ռուբլու։ Դա շատ հաւանական է, որովհետև վերջին տարիներում աւելացել են ճեմարանի տնտեսութեան ծախսերը, որոնք առաջ չը կային։ Հիմայ հարցը պարզվում է։ Եթէ Էջմիածինը իր բազմաձև տարվայ մէջ (1878 թուում, որի հաշիւը տեսանք) կարողացել է իր բոլոր ծախսերը ծածկելէն յետոյ դարձեալ 40 հազար ռուբլի զուտ արդիւնք ունենալ, ուրեմն,

ճան, որ հասարակութիւնը և մանաւանդ տերութիւնը ստիպվեցան փողով և ցորենով օգնել կարօտեալներին....

Ի՞նչ է պատճառը որ այդ տեսակ հարուստ երկիրը չէ կերակրում իր աշխատողներին և շատ անգամ ենթարկվում է այս տարվայ պէս անախորժ և դժբաղդ պատահարներին։

Պատճառն այն է, որ ոչ թէ միայն Երևանեան նահանգի, բայց և ամբողջ Անդրկովկասի երկրագործը դրամագլուխ չունի, մեր երկրում եղած կապիտալները գործ են դրվում կապալների, վաճառականութեան վրա և ոչ թէ երկրագործական և գիւղատնտեսական ձեռնարկութիւնների վրա։

Իսկ մեր գիւղական ազգաբնակութիւնը դեռ ևս այնքան տգէտ և անշարժ է, որ ընդունակ չէ զանազան գիւղական ընկերակցութիւններ կազմել, կամ գիւղական կրեդիտ հաստատել, որպէս զի գիւղական ընդհանուր դումարներով խելացի հիմունքների վրա սկսի մշակել հողը և օգուտ քաղել կատարելագործված միջոցներով բնութեան արդիւնքներից....

Մնում է միայն սպասել որ օտարազգի կապիտալիստները գան մեր երկիրը, սկսեն մշակել նրան, գործ դնեն իրանց կապիտալները մեզ մօտ երկրագործական և գիւղատնտեսական այլ և այլ ձեռնարկութիւններ գլուխ բերելու համար։

Այդ պատճառով ցանկալի է որ պ. Սաղաթելեանի գրքի պէս օգտաւէտ գրքերը, որոնք հետաքրքրում էին մեր երկրի և միւս մասերը, աւելի մեծ թիւով հրատարակվէին, որովհետև այդ տեսակ գրուածները, մանաւանդ եթէ բացի ռուսերէն լեզուից հրատարակվէին եւրոպական և ուրիշ լեզուներով, կարող էին ծանօթացնել օտար կապիտալիստներին մեր երկրի բնական անսպառելի հարստութիւնների հետ և այսպիսով կը գրաւէին օտար կապիտալները դէպի մեր երկիրը։

Գ. Ա.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

—

Վաղը «Մշակի» բանասիրական բաժնում կը տպվի «Հայոց թատրոն» վերնագրով մի յօդուած Նոր բեցենդենտ ստորագրութեամբ։

—

Բժիշկ Սարժումեանից ԱՇՏԱՐԱԿԻՑ ստացանք 10 բուբլ յօգուտ «Արարատեան» ընկերութեան 1880 թվի համար։ Պարոնը խոստանում է իւրաքանչիւր տարի նոյնքան դումար նուիրել յիշեալ ընկերութեանը։

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԱՒՍՏՐՕ-ՈՒՆԳԱՐԻԱ

—

Աւստրիական լրագիրները Վիէննայի բաղ-

Նախնթաց 11 տարիներում, երբ ծախսերը համեմատաբար աւելի փոքր էին, (որպէս խոստովանվում է «Արարատը») պէտք է իւրաքանչիւր տարի 40 հազարից աւելի զուտ արդիւնք մնացած լինէր։ Մենք ենթադրում ենք վերջին դումարը միայն (40 հազարը) և դարձեալ համնում ենք այն եզրակացութեանը, որ 11 տարվայ ընթացքում պէտք է կազմվեր Էջմիածնի գանձարանում աւելի քան կէս միլիօն դրամագլուխ։ Իսկ այժմ գանձարանում կայ միայն 350,000 բուբլու զանազան տօկոսաբեր արժէթղթեր։ Մենք չենք խօսում այդ դումարի աւել կամ պակաս թանչանների մասին, բայց մեզ կրկին տարակուսութեան մէջ է ձգում մի ուրիշ խնդիր,—արդեօք յիշեալ 350,000 բուբլին, որ այժմ գտնվում է Էջմիածնի գանձարանում, ո՞րտեղից է գոյացել. արդեօք դա նախնթաց 11 տարիներից աւելացած զուտ արդիւնքն է, թէ մեր վերև յիշած խոշոր դումարների մնացորդն է, որոնք չեն նշանակված հաշիւների մէջ, որպէս են Սէրովբէ եպիսկոպոսի փողը, Հնդկաստանի կտակների փողերը, ճաշոցներից և ձայնագրեալ շարականներից գոյացած փողերը և այլն։ Ցուսով ենք, որ «Արարատ» ամսագիրը կը լուծէ այդ նշանաւոր կնճիռը և կը փարատէ մեր տարակուսութիւնները։

Ինչ որ ուրախալի է այդ հաշիւների մէջ, այն է, որ այժմ Էջմիածինը իր մշտական և հաստատ արդիւնքների աղբիւրներից լրացնելով իր տարեկան ամբողջ ծախսերը, կարող է այսուհետև իւրաքանչիւր տարի մի նշանաւոր դումար յետ ձգել և աւելացնել գանձարանի մայր դրամագլխի վրա։ Այդ այդպէս լինելուց յետոյ, որ թագցնել չէ կարելի, մենք չենք հասկանում, այլ ևս ինչն է ստիպում Էջմիածնին կրկին օժանդակութիւն խնդրել։

«Արարատ» ամսագրում յիշված է, թէ ինչ բաների համար է խնդրում Էջմիածինը նոր օժանդակութիւնը. նրան դեռ պակաս են մի քանի նոր շինութիւններ, որոնց պէտք է կառուցանել։

Դրանք են՝ ճեմարանի նոր ննջարանի շինութիւնը, որ պէտք է վերջացնել, և որի վրա մինչև այսօր ծախսված է 27,489 ր., յետոյ շինվելու է նոր վեհարան, որովհետև այժմեանը անպատշաճ է ընդհանուր հայոց ազգի Հայրապետի բնակութեան համար. շինվելու է «աթոռավայել» հիւրատուն, համար. շինվելու են միաբանութեան համար յարմարաւոր բնակարաններ, որովհետև ներկայ խուցերը անվայելուչ են աբեղաների համար, շինվելու է և այն և այն։

Մենք ընդդէմ չէինք լինի, որ մեր աշխարհի վայելչութիւններից հրաժարված, և իրանց անձը աղօթքի ու ճգնութեան նուիրած աբեղաները պալատների մէջ ապրէին (որովհետև շատ բան են շինում), բայց դժբաղդապէս վատ ժամանակ ընտրեցին իրանց բաղձանքին հասնելու համար, նրա համար որ, այժմ ժողովրդի ուշադրութիւնը դարձրած է աւելի կարևոր պէտքերի վրա, նրանք լսում են Ցաճկաստանի մեր եղբայրների հառաջանքները (որոնց համար Էջմիածնի ականջները չանքները (որոնց համար Էջմիածնի ականջները խուլ են) և մտածում են նրանց օգնել։ Ուրեմն խուլ են) և մտածում են նրանց օգնել։ Ուրեմն մեր պատուելի հայր սուրբերը թող մի փոքր ևս համբերեն, թող առ ժամանակ եօլայ դնան իրանց հին խուցերով, ի հարկէ, մի ժամանակ հերթը նրանց էլ կը հասնէ։

Մեր եկեղեցականների ապարդիւն ձգտումները շինութիւնների վերաբերութեամբ մինչև մոլութեան է հասնում։ Ով որ միանգամ կը գնայ Էջմիածին, այնտեղ կը տեսնէ զանազան սկսված և չը վերջացրած շինութիւններ, և կամ զանազան կառուցված շինութիւններ, որոնք այս և այն կաթողիկոսների օրերում շինվել են, և նախորդի շինածը յաջորդի ժամանակում անխնամ մնալով, քանդվել, կործանվել և ոչնչացել է։

Նոյն իսկ ճեմարանի շինութիւնը Վաղարշապատի նման մի կորած տեղում և Բիւրականի ամարանոցի շինութիւնը, և ուրիշ անպէտք շինութիւններ, որոնք կլանել են ազգի քսակից մօտ 200,000 բուբլի,—չայլութիւնից աւելի չափազանց

մարուեստեան դպրոցի խառնակութեան մասին մի քանի մանրամասնութիւններ են հաղորդում։

Վերջին ժամանակներս յիշեալ դպրոցի խառնակութիւնը թէ լրագրութեան և թէ ժողովրդի խօսակցութեան նիւթ է դարձել։

Դեկտեմբերի 3-ին, ժամը տասերկուսին Վիէննայի բաղմարուեստեան դպրոցում պէտք է սկսվեր պրոֆէսսոր Պետրոսի Ֆիզիկայի դասախօսութիւնը։ Այդ պրոֆէսսորն իր խօսութեան պատճառով սիրելի չէ ուսանողներին, որոնք դասախօսութեան բացման ժամերին, որոնք դասախօսութեան բացման ժամանակ մի կրաւորական ընդդիմադրութիւն ցոյց տուին. նրա դասախօսութիւններին ստորագրված մօտ 200 ուսանողներից ոչ մէկը ներկայ չը գտնվեցաւ նրա այդ օրվայ դասախօսութեանը։ Նրանք մնացին դպրոցի սրահներում։ Երբ պրոֆէսսորն եկաւ, նրան ողջունեցին հեգնական ծիծաղներով, բայց նրա աշակերտներից ոչ մէկը նրան չը հետևեց դասախօսութեան դահլիճը։ Վերատեսուչը, գահերեցը և դպրոցի զանազան իշխանութիւնները ի զուր էին խրախուսում ուսանողներին ներկայ գտնվել դասախօսութեանը։ Վերջիններս քաղաքավարութեամբ, բայց հաստատութեամբ պատասխանեցին, որ չեն կամենում դաւաճանել իրանց մտադրութեանը։ Միայն նրանք համաձայնեցան հեռանալ դպրոցի սրահներից ու բակից։

Հետևեալ օրը, պ. Պետրոսի դասախօսութիւնը նոյնչափ բաղմամարդ էր, ինչպէս և նախընթաց օրը, ուստի վերատեսուչը մի սարսափելի յայտարարութիւն կպցնել տուեց պատերից, որի մէջ խստիւ հրաւիրում էր ուսանողներին յետ առնել իրանց ստորագրութեան տոմսակները դպրոցի դահլիճի մօտից և հետևել պ. Պետրոսի դասախօսութիւններին։ Վերատեսչի յայտարարութիւնը բացի այս, հաղորդում էր, որ նրանք, որոնք չեն հնազանդվի այս պատուէրին, կը համարվեն իբրև ապստամբ, և նրանց հետ կը վարվեն օրէնքի բոլոր խստութեամբ։ Իսկ ուսանողներից նրանք, որոնք կը յանդգնեն քաջալերել իրանց ընկերների այս յամառութիւնը, կարձակվեն դպրոցից և աւստրիական ոչ մի համանման դպրոց չեն կարող մտնել։

Ուսանողներն այս յայտարարութեանը պատասխանեցին մի ցուցմունքով, որով նրանք ցոյց տուին, որ հաստատ են իրանց դիտաւորութեան մէջ։ Մի և նոյն օրն առանց դասախօսութեան դահլիճը մտնելու, նրանք ընդունեցին պրոֆէսսոր Պետրոսին սլոցներով ու աղմուկներով։ Վերատեսուչը խաղաղութիւնը վերականգնելու մտադրութեամբ, թոյլ տուեց մի քանի ուսանողների, որ առանց տոմսակի մտնեն դասախօսութեան դահլիճը։ Դասախօսութիւնն սկսվեց, բայց բակում և անցքերում աղմուկը շարունակվում էր։ Եւ երբ վերատեսուչն ու պրոֆէսսորները յորդորում էին ուսանողներին հետևել դասախօսութեանը, ուսանողները պատասխանեցին. «Թող կորչի՛ վերատեսուչը։» Երբ ուսանողների մէջ լուր տարածվեցաւ, թէ դպրոցում պոլիցիականներ են գտնվում, այն ժամանակ աղմուկն ու խռովութիւնները բազմապատկվեցան, ու դպրոցի բակից տեղափոխվեցան փողոցը, ուր ցուցմունքներ անող ուսանողներից մի քանին արդէն իջել էին։ Վերատեսուչը, կամենալով բռնել մի ուսանողի օձիքից, միւս ուսանողները նրան խկոյն վայր գցեցին։ Այդ միջոցին վրա հասան պոլիցիականները և պահապան զօրքը։ Կարգը վերականգնվեցաւ առանց կալանաւորութիւնների հարկաւորութեան։

Եւ որովհետև սրանից յետոյ դեկտեմբերի 5-ին էլ ուսանողները դեռ չէին դադարում խռովութիւններ ու աղմուկներ անելուց, ուստի դպրոցը փակվեցաւ մի տարի ժամանակով։

ԱՄԷՐԻԿԱ

—

Վաշինգտոնում դեկտեմբերի 9-ին պ. Տրօստ ներկայացուցիչների ժողովին մի յայտարարութիւն ներկայացրեց, որի մէջ մեծ համակրութիւն է ցոյց տուած իրլանդացոց բոլոր այն ջանքերի համար, որով նրանք ձգտում են բարւոքել իրանց հայրենիքի վիճակը և ինքնավարութիւն ստանալ։ Յայտարարութիւնը կարդալուց յետոյ, նա յաջողութիւն մաղթեց նրանց գործին։

ժամանակներում գնած մի հողի կտոր, որը որ և իցէ արդիւնք բերէր։ Էջմիածնի այժմ ունեցած բոլոր գիւղերը, այգիները, ջրաղացները, վարելահողերը, մարգագետինները, և այլ զանազան կալուածները, որոնք նրա արդիւնքների աղբիւրներն են կազմում, —բոլորը հին ժամանակների սեպհականութիւն է, նոր՝ ոչինչ չէ ձեռք բերած։ Մենք, ճշմարիտ, չենք կարող առանց վրդովմունքի նայել շահերի մի այսպիսի անհասկացողութեան, մի այսպիսի անկարգ տնտեսութեան վրա։ Ոչ մի օգտաւէտ հիմնարկութիւն չեն անում, ոչ մի շահաբեր նոր կալուածք չեն գնում, եղած փողերը վատնում են ժանպէտք շինվածքների վրա, և դառնում են ժողովրդին, ասելով, փող տուէք, մեզ փող է պէտք...

Կրկին վերադառնալով «Արարատ» ամսագրում տպված հաշիւներին, մենք կասենք,—քանի որ Մայր Աթոռի մէջ կանոնաւոր տոմարակալութիւն չը կայ, քանի որ բոլոր հաշիւները Սինոդի կնտրոլի տակ չեն դրված, քանի որ Էջմիածնի ինքնարոլի տակ չեն դրված, քանի որ Էջմիածնի ինքնակամ ծախսերը չեն սահմանափակված, չեն որոշված, որ առանց Սինոդի գիտութեան և համաձայնութեան ծախսեր չը լինէին, քանի որ Էջմիածնի կալուածքների կապալառութիւնը նոյն իսկ վանքում բնակվող ինտերեսանտների ձեռքում կը լինի (ուրիշ մի քանիների մասին առ այժմ լռում ենք)—գործերի այդ դրութեան մէջ հաւիւ թէ ժողովուրդը կարող էր բաւականանալ «Արարատի» մէջ տպված վայրիվերոյ հաշիւներով։

Ցուսով ենք, որ Վեհափառ Հայրապետը ուշադրութիւն կը դարձնէ վերոյիշեալ կէտերի վրա։

***

Վիրոյիշեալ յայտարարութեան պէս, մի յայտարարութիւն էլ պ. Ժիլլէտ ներկայացրեց և ժողովի կողմից հրաւիրեց Դէ Նախագահին, որ նա գրէ անգլիական կառավարութեանը և յոյս յայտնէ, որ նա միջոցներ գործ կը դնէ, և տէր կը դարձնէ իրլանդացիներին այն հողերի, որոնց նրանք մշակում են։

ՆԱՄԱԿ ԹԻՒՐՔԻԱՅԻՑ

—

Կ. Պոլիս 2 դեկտ.

Ազգ. ժողովոյ նոյմ. 30-ի նստի օրակարգը բաւական ծանրաբեռնեալ է, օրն ցուրտ, ժողովատեղին հեռու, և մեր պատուար ժամերն այս դժուարութեանց յաղթելու միջոց մ'ունէին, այն է ժողովոյ ջերթալ. հետևաբար ուրբաթ օր երեսփոխական ժողովը օրինական մեծամասնութիւն չունեցաւ որոշումներ տալու համար և վիճաբանութեամբք ժամանակ անցուց.

Երեսփոխաններն այժմ Պատրիարք հարցումներ անելու սովորութիւնը ստացած են. առջի անգամ գրեցի թէ ինչ դէշ հետևանքներ կունենան այս հարցումներն, մանաւանդ քաղաքական խնդրոց մասին։ Այս նստին բաւական հարցումներ կային, մեծ մասը ազգային ներքին գործոց վերաբերեալ։ Պ. Գաբամաճեան անուն երեսփոխանը մենաշնորհ ունի հարցումներ անել այնպիսի խնդրոց վրայ որոց խելքը չը հասներ, և այս անգամ Զէյթունի հարցի նկատմամբ ըրած հարցումներն Պատրիարքի համբերութեան ալ վերջ տուին, և յայտարարեց թէ այսպիսի հարցումներ անտեղի են, վասն զի այնպիսի խնդիրներու կը վերաբերին զոր հրապարակաւ ի վեր հանել անկարելի է. ուստի կամ կատարեալ վստահութիւն ունենալու է և ձգելու է որ ինքն կարգադրէ գործերն, կամ թէ ոչ վստահութիւն չունենալը յայտնելու է։—

Այս առթիւ Պատրիարքը ասաց թէ՝ «Կիլիկիոյ Կաթողիկոսը կը գրէ թէ Զէյթունի համար հայ կառավարիչ մը պիտի դրուի. յետոյ կը գրէ թէ, հայ կառավարչի մը ընտրութիւնը չատ ապահով չէ։»—

Կարևոր առաջարկութիւն մ'ալ պ. Փափազեանին էր, որով կառաջարկէր թէ Ասիոյ այն քաղաքներուն մէջ յորում անգղիացիք հիւպատոսներ կընտրեն, Պատրիարքարանն ալ աշխարհական պատուիրակներ ընտրէ, և նոքա առաջնորդի քով արտաքին գործոց յարաբերութիւններն կատարեն և մեծ իշխանութիւն ունենան առաջնորդաց և վանահայրերու վրայ. այս առաջարկութիւնը նախաքննութեան դիւանի խրկուեցաւ։

Ժողովը ցրուեցաւ և 15 օրէն պիտի գումարի։ Արդարև չատ ուրախալի տեսարան մը չէ այս այսպիսի ժամանակներ երեսփոխանական ժողովոյ այս թոյլ ընթացքը։ Երբ քաղաքական ինքնավարութիւն կը պահանջեմք, պարտաւոր ենք մեր ներքին գործերն բարեկարգել։ Մեր վարժարաններն, մեր վանքերն ազգային իշխանութեան մէկ բարիքը չեն տեսած. ամուսնական խնդիրներու վերաբերեալ դատական օրէնք մը չունինք։ Պէտք է Ազգ. ժողովը, ազգային վարչութիւն լաւ ուշադրութեան առնուն ազգային ներքին կացութիւնը, և իրենք այս կարևոր հարցով զբաղին, մինչ Պատրիարքը միւս կողմէ արտաքին խնդիրներով ժամանակն անցնելու պարտաւորեալ է։—

Մեր ներքին մեծ ցաւերէն մին ալ վանքերն են, մինչ դոքա կարող են լուսոյ վառարաններ հանդիսանալ, կոյր և վատ միաբաններու ձեռքը ազգին աւելի վնասներ կը հասցնեն։ Ասոնց մէջ նշանաւոր տեղ կը բռնէ Մշոյ Ս. Կարապետի վանքը. եթէ սա կամենայ Տարոնոյ մէջ նշանաւոր գործեր կը տեսնէ, սակայն այսօր առաջնորդ և միաբան Կ. Պոլիս են, ղիրար կամբաստանեն. Պատրիարքարանը կը քննէ և առաջնորդ ու միաբան հաւասարապէս մեղապարտ կը գտնէ, և փոխանակ պատուհասելու զիրենք և ջանալու որ վանքը արժանաւորաց ձեռքն անցնի, իրարու հետ կը հաշտեցնէ զանոնք և կը խնդրէ որ քիչ օրէն մեկնին ի Մուշ։

Ուրիշ նշանաւոր միաբանութիւն մ'ալ որ պատուաւոր է և զազգը արժանաւոր կերպով կը ներկայացնէ, այսօր ծանր պարտուց տակ է։ Այդ Երուսաղէմայ միաբանութիւնն է։ Երուսաղէմայ մէջ հայ թէ օտարական այդ հոյակապ վանքն այցելելու պատեհութիւն ունեցած են, և զովեսիւք կը խօսին. թէպէտ Հայաստանի համար ծառայութիւն մը չը մատուցանէր Երուսաղէմ, բայց յաչս օտարաց ազգային պատիւը բարձր կը պահէ։

Երկար ատեն է որ դորա պարտուց խնդիրն մտածութեան առարկայ եղած է։ Բաւական ժողովներ եղան, վանքը կը դժկամակէր հաշիւ ներկայացնել՝ այժմ կը լսուի թէ Ստեփան-բաշա որ Սիւրէա կերթար պաշտօն ունեցաւ անգամ մը վանքի հաշիւներն աչքէ անցնել։

Այժմ պիտի սկսին հանգանակութիւն անել Երուսաղէմայ համար. պարտքը մօտ 300,000 բուրլի է. Երեմիա անուն եպիսկոպոս մը Երուսաղէմէ Կ. Պոլիս եկաւ, և քիչ օրէն Տփխիս պիտի դայ ձեր ջերմեռանդութիւնը փորձելու։

Երուսաղէմայ այդ պարտքը վճարելը խօսք չը վերցնէր և պիտի վճարուի. և թէպէտ փափազելի էր որ այդ մեծ գումարը ազգային կրթութեան նուիրէինք, բայց հնար չը կայ. կարծեմք թէ ալ ազգն ալ պէտք չէ թողու որ այս կրօնաւորներն ուզածնուն պէս առնեն ծախեն, պէտք է լաւ մը քննել Երուսաղէմայ հաշիւն, տեսնել թէ ուսկից յառաջ կուգան և դարմաններն գտնել։ Եւ այսուհետև միշտ նոցա մէջ հսկող մը գտնուի ազգի կողմէ։ Նմանօրինակ պայմաններ ընդունելի չեն կրնար ըլլալ սուրբ ուխտէն, սակայն հարկ է այդ պայմաններն դնել։

Միաբաններուն անձնական հարստութիւն ունենալնին անհաւանական չէ։ «Արևելեան Մամուլ» անցեալներն այս խնդրոյն վրայ մասնաւոր յօդուած մը գրելով ցոյց կուտայ թէ ինչպէս առանց ազգին բեռ լինելու միաբանութիւնը իր անչարժ կալուածներն կարգադրելով կարող է պարտքերը վճարել։ Ինչ որ է, չեմք կարծեր որ ազգը առանց պայմանի և կատարեալ վստահութեամբ իւր փողերը այս վարդապետաց ափը լեցնէ։

Քիւրդերու ապստամբութիւնն բաւական աղմուկ պատճառած էր, այժմ թերթերն կը ծանուցանեն թէ ապստամբութեան գլուխ Շէյխ Իպատուլլահի օսմանեան պատուանշան շնորհուեր է Սուլթանէն, և Պէտրխան-բաշայի որդին, որ անցեալներն քիւրդ ապստամբութեան մը գլուխն էր և այնքան չարիք հասոյց Տիգրանակերտի, Կիլիկիոյ Այդին քաղաքի կառավարիչ անուանուեր է. զարմանալու չէ, հաւանական է որ այդ քրդաց ապստամբութիւններն կեղծիք լինին կառավարութեան կողմէ զանազան պատրուակներով։ Միւս կողմէ Ապէտին պէյի աքսորած պէյերն դեռ հանդստօրէն Հալէպ են և կասկած կայ որ դարձեալ ի Տիգրանակերտ վերադառնան և աւելի վնասակար լինեն հայոց։

Իսկ Ապէտին պէյ որ Սեբաստիոյ կառավարիչ է, հայոց օգտակար լինելու տրամադրութիւններ ունի. սրբազանի հետ լաւ յարաբերութեան մէջ է. յուսամք թէ իւր վրայ գովեստներ գրելու առիթ ունենամք։

Կ. Պոլսոյ ուշադրութիւնէն չեն վրիպեր Եւրոպիոյ մէջ ցիր և ցան հայերն. նոցա մէջ ազգայնութեան ոգին վառ պահելու համար Խորէն սրբազան, ինչպէս գիտէք պատուիրակ կարգուած էր. սրբազանը այցելեց Պուլկարիա, ամեն կողմ սիրալիր և փառաւոր ընդունելութիւն գտաւ, Պուլկար կառավարութիւնը պէտք եղած յարգանքը ընծայեց հայոց նուիրակին. սրբազանը Ռումանիա անցաւ և «Levant» ի ընդունած մասնաւոր հեռագիր մը կը ծանուցանէ, թէ իշխանին ներկայացեր, Ռումանիոյ պաշտօնէից հետ տեսակցութիւն մը ունեցեր է, թէ պաշտօնեայք և թէ իշխանը զինքը սեղանի հրաւիրած են. սրբազանը պատարագ մատուցեր է որոյ Կարոլոս իշխանը ներկայ գտնուած է, ինչպէս և պաշտօնեայք։—

Խորէն սրբազան իւր տաղանդովը, լեզուագիտութեամբը և քաղաքավարութեամբը իրեն յանձնուած փափուկ պաշտօնն արժանաւորութեամբ կատարած է միշտ, սակայն կը զարմանամք թէ մինչև իսկ քարտուղար մը իրեն ընկեր չեն տար։ Եւ չատ աւելի զարմանալին կամ աւելի ևս ցաւալին է որ մեր Պատրիարքարանը՝ երբ Խորէն սրբազան փափուկ պաշտօն կունենայ, զնա հարուածելու առիթ կը գտնէ։ «Մասիսի» մէջ անչուշտ կարդացիք թէ Պատրիարքարանը սրբազանի Լուսինեան տիտղոսը չը պիտի ճանաչէ մինչև որ այս գործը աղէկ մը քննէ։ Լաւ, այս Պատրիարքարանի իրաւունքն կրնայ համարուիլ, բայց ինչ հարկ կար հետևեալ տողերն հրատարակելու «...և հարկ կը համարի Պատրիարքարանը հրատարակել որ իրեն համար գեր. Խորէն սրբազանի ամենէն վեհ և վըսեմ տիտղոսն իւր եպիսկոպոսական բարձր աստիճանն է, որ բաւական է զինքն ամենուն յարգանաց արժանի ընել և անունը փայլեցնել ի միջի քաղաքակրթեալ ազգաց.»

Այս վերջաբանը անվայել է. այդ խօսքերով Պատրիարքարանը այնպէս հասկցնել կուզէ թէ սրբազանը փառքի և յարգանաց հետամուտ է և թէ զնա մխիթարելու համար իրեն կը յիշեցնեն որ եպիսկոպոսական մեծ աստիճանը ունի։ Կը վստանամք որ Խորէն սրբազանի արժանիքը չեն ուզեր ճանաչել կամ կը նախանձին։ Մեր քաղաքական յարաբերութեանց մէջ վտանգաւոր դերերը Խորէն սրբազանի վերապահուած են. Կ. Պոլիս այդ միակ եպիսկոպոսն էր որ օտար թերթերու մէջ կրնար ֆրանսերէն լեզուաւ ազգային խնդիրներն պաշտպանել. ինքն էր միայն որ դեսպանաց հետ յարաբերութիւն ունէր և Իգնաթիէվի հետ սերտ բարեկամութիւն ունէր. երբ ռուս բանակներն Սան-Սթէֆանօ հասան, Պատրիարքը Նար-Պէյ Սրբազանէն խնդրեց որ բանակատեղին երթայ, տեսակցի Իգնաթիեվի հետ, և դաշնագրի մէջ հայոց յօդուած մը դնելու միջոցը գտնէ. գործը դժուար էր, անցեալնիս աղէկ չէր. Խորէն Սրբազան յաջողեցաւ նաև Պատրիարքի և Նիքոլա Դուքսին տեսակցութիւն մը անել տալ։ Յետոյ սրբազանը Բէթրպուրգ գնաց, առանց քարտուղար մը իսկ միասին ունենալու, ներկայացաւ Կայսեր և Կորչակովի, պաշտպանեց մեր դատը։

Սրբազանի այս գործը աննկարելի ոճիր մ'էր յաչս օսմանեան կառավարութեան և Բ. Դուռը Ղ ա յ ի ն Խ ո ր է ն (Մատնիչ) կասէր։ Բէթրպուրգ երթալն, թրքաց համար Լոնդրա երթալու չը նմաներ։ Կ. Պոլսոյ եպիսկոպոսաց մէջ միայն Խորէնն է զոր Բ. Դուռը պիտի արգելէ Պատրիարքական յաթոռ բարձրանալ, իւր պատուիրակութեան պատճառաւ. բայց հոգ չէ, սրբազանը առ ազգն ունեցած իւր պարտքը կատարած է և կը կատարէ, այդ բաւ է։

Իսկ այն խօսքերն թէ եպիսկոպոսական աստիճանը «բաւական է զինքն ամենուն յարգանաց արժանի ընել և անունը փայլեցնել ի միջի քաղաքակրթեալ ազգաց» գլուխ-գործոց մ'է։ Ուրեմն անձնական արժանիք, և տաղանդ կարևորութիւն չունեն, և այնքան ազէտ, անարժան, եկեղեցւոյ նախատինք եղող եպիսկոպոսներն ալ պէտք է փայլեն ի միջի քաղաքակրթեալ ազգաց, վասն զի եպիսկոպոս են!! Կարծեմք ալ ժամանակն է որ մեր Պատրիարքարանը ասանկ ամենեղփեղ հրատարակութիւններ հրապարակ չը հանէ։

Դեկտեմ. 1-ին Հասուն Սուլթանին ներկայացաւ, մեծ փառքով և պատուով. յետոյ Բ. Դուռը գնաց, այցելութիւն տուաւ նախարարաց, հասուն-նանց ուրախութիւնը չափ չունի, հայկական ինքնավարութիւն մը իրենց համար այսքան նշանակութիւն չը կրնար ունենալ։

Կը խօսուի թէ ներքին գործոց պաշտօնեայ Մահմուտ բաշա յայտներ է Պատրիարքին թէ Հայաստանի ինքնավարութեան խնդիրն նախարարաց ժողովոյն պիտի ներկայացնէ։ Այս լուրը շատ և խիստ շատ ստուգութեան կարօտ է։

Հայկակ

ՆԱՄԱԿ ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՑ

—

Դավրէժ, 8 հոկտեմբերի

Հոկտեմբերի 7, կիրակի գիշերը (Լիլավայի թաղի եկեղեցու բակում) նոր շինած դահլիճում տեղի ունեցաւ մի թատրօնական ներկայացում, որ ինչպէս գրել էի առաջուց, ողբերգութիւնից «Շամիրամի» պիեսան էր, իսկ կատակերգութիւնից «Սնապաշտ կինը»։ Այս վերջինը վեր առած լինելով տեղիս հասարակութեան կեանքից, խիստ լաւ տպաւորութիւն գործեց թատերասէրների վրա, մանաւանդ որ այս անգամ դերասանական խումբը աւելի և աւելի եռանդ և յաջողականութիւն ցոյց տուեց։ Նոր դահլիճը շինված է մասնաւոր նուիրատուութեամբ, վիճակահանութեան արդիւնքով և այլ նպաստներով, ինչպէս և շինվում է նրա մօտ մի առանձին բակի մէջ մի աղջկանց դպրոց նոյն թաղեցոց համար։ Այդ դահլիճը յատկապէս թատրօնի համար չէ և ճշմարիտը խօսելով յարմարութիւն էլ չունէ, քանի որ նա շինված է եկեղեցու բակում. նա վերջը կը ծառայէ ժողովարանի կամ ճաշատան, թէև բաւական ընդարձակ է և ամփոփում է աւելի քան 200 աթոռ։ Սակայն մի գեղեցիկ և պարզ դահլիճ է և առ ժամանակ կարելի է ներկայացումներ տալ նրա մէջ, մինչև որ բուն քաղաքի մէջ մի աւելի ընդարձակը շինվի մի յարմարաւոր տեղում և եթէ կարելի է լօժանեռով։ Որովհետև ներկայացումների ժամանակ եւրոպացիների և պարսիկ մեծամեծների ցոյց տուած համակրութիւնը և յաճախելն և միւս կողմից էլ մեր ազգայինների ջերմ փափագը դէպի թատրօնը մի մի դրաւականներ են մի մշտական և հաստատ թատրոն ունենալու համար։ Դավրէժի նման մի բազմամարդ քաղաքում, մի ազգային թատրոն ունենալը ոչ միայն պատիւ կը բերէ հայ ազգին, այլ դա մի միջոց կը լինի մեր ազգային երկսեռ դպրոցներին և այլ բարենպատակ գործերին օգնելու համար։ Ասածիս օրինակ կարող է լինել մեր վերջին ներկայացումն, որի ժամանակ 200 բուբլու տոմսակ վաճառվեցաւ, բայց ափսոս որ ոչինչ չը մնաց, որովհետև «Դանայիի ծակ կարասի» մէջն էինք գցել այդ բուբլիներն։ Մեր դերասանական խումբը խոստացել էր երկու ներկայացում տալ ի նպաստ Լիլավայի թաղի ազգային չինութիւնների. այս առաջին ներկայացումն էր, տեսնենք ինչպէս կը յաջողվի երկրորդը։

Թատրօնի ներկայացումից առաջ, այսինքն կիրակի կէսօրին եղաւ նոյն դահլիճում, Լիլավայի թաղի աղջկանց դպրոցի բացման հանդէսը, որ նոյնպէս լաւ անցաւ և լաւ տպաւորութիւն թողեց։ Այդ հանդիսի ժամանակ զանազան երգեր երգվեցան, ճառեր խօսվեցան և երեկոյին լուսաւորութիւն և հրախաղութիւն եղաւ, և գիշերը թատրօնի ներկայացման ժամանակ էլ կառավարութեան նուագարանը եկեղեցու բակում պարսից նոր նօտայով ածվում էր։

Հեռագիրը մեզ լուր բերեց, որ վերջապէս Վեհափառ Կաթողիկոսը բարեհաճել է Ատրպատականի առաջնորդ նշանակել, Գեր. Գրիգոր արքեպիսկոպոս Մուշեղեանցին, որ արդէն ճանապարհին է և որ մի քանի օրից յետոյ Դավրէժում կը լինի, այսինքն իր պաշտօնատեղումն։ Սրբազանը բնաւ այս կողմերը եկած չէ, և մենք ծանօթ չենք նրա հետ, սակայն ինչպէս նրա բարի համբաւը լսել ենք, յոյս մեծ ունենք որ նա հաճամապատասխան կը լինի ժամանակիս ոգուն և պահանջմանցը. իբրև հովիւ քաջ իր հօտի շուրջը, պահպանելով մի և նոյն ժամանակ լաւ յարաբերութիւն պարսից կառավարութեան և առաջնորդարանի մէջ։

Արմենակ

«ՄՇԱԿԻ» ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԻՑ

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 18 դեկտեմբերի Պետական բանկի 5% տոմսակը առաջին շրջանի արժէ 92 ր. 75 կ., երկրորդ 92 ր. 75 կ., երրորդ 93 ր, 5 կ., չորրորդ 92 ր. 87 կ., առաջին ներքին 5% փոխառութեան արժէ 230 ր., երկրորդ 224 ր. 75 կ., արևելեան առաջին 90 ր., երկրորդ 90 ր., ոսկի 7 ր. 85 կ.։ Ռուսաց 1 բուբլ Լօնդոնի վրա արժէ 25,9 պէնս, ռուսաք 100 բուբլ Գերմանիայի վրա 126 մարկ, 75 պֆ. Փարիզի վրա 263 ֆրանկ, 50 սանտիմ։ Բօրսայի տրամադրութիւնը հանդարտ է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 19 դեկտեմբերի։ Տաշկէնտից հեռագրում են «Русскій Инвалидъ» լրագրին, որ նոյեմբերի 23-ին ութ մարդոց ուղեկցութեամբ հասան այնտեղ աֆղանական սերդարները, հանդուցեալ Շեր-Ալիի եղբայր Պէյկ-Մահմէդ-խանը և նրա եղբօր որդի Ուշէմ Հիւսէյն-խանը։ Եկողները փախել են Կաբուլի մօտ անգլիացիների հետ տեղի ունեցած ճակատամարտից յետոյ, և խնդրել են մեր հիւրընկալութիւնը։ Դեկտեմբերի 14-ից մի ուրիշ հեռագիր էլ հաղորդում է, որ աֆղանական սերդար Աբդուրրահման-խանը, արձակուրդ խնդրելով, որ գնայ աֆղանական նահանգ իր ազգականների հետ տեսակցելու, այնտեղից էլ փախել է արտասահման։

ԿԱՆՆ, 19|31 դեկտեմբերի։ Կայսրուհու առողջութիւնն ընդհանրապէս շարունակում է լաւանալ ներկայացնելով միայն մի քանի աննշան տատանումներ սովորական թուլութեան մէջ։ Այսօր ջերմութեան աստիճանը 37,9, իսկ երակի զարկը 112 է։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 10 դեկտեմբերի։ Երէկ զինուորական ծովային դատարանը Ֆիլիպէ-ադիւտանտ Բարանովին մեդալարտ ճանաչեց և վճռեց նրան հրաժարեցնել պաշտօնից։

ՄԱԴՐԻՏ, 19|31 դեկտեմբերի։ Այսօր գբօսնելուց վերադարձած ժամանակ պալատի մուտքի մօտ, Թագաւորի և Թագուհու վրա երկու անգամ ատրճանակ արձակեցին։ Տանտիննամեայ եղեռնագործն իսկոյն սկսեց փախչել, բայց փողոցում բռնվեցաւ և կալանաւորվեցաւ։

ՄԱԴՐԻՏ 19|31 դեկտեմբերի։ Թագաւորին և Թագուհուն մահ սպառնացող եղեռնագործ Ֆրանցիսկի Օդէրօ դաւակիցներ ունի, որոնցից մէկն արդէն կալանաւորված է, իսկ միւսին որոնում են։ Երկրորդ գնտակը Թագուհու մօտով անցաւ։

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ПОСТУПИЛИ ВЪ ПРОДАЖУ СЛѢДУЮЩІЯ КНИГИ:

Домашній Общедоступный вкусный столъ настольная книга для молодыхъ хозяекъ, содержащія въ себѣ 370 обѣдовъ и употребительныхъ блюдъ съ подробнымъ алфавитныхъ указателемъ на каждый день, составила Н. Кололитцева ц. 2 р. 50 к. съ пересылк.

Руководство Кройки Шитью женскаго платья для самообученія по вновь изобрѣтенной весьма простой и вѣрной системѣ съ 18-ю рисунками и многими чертежами, ц. 1 р. 50 к. съ пересылк.

Новый Способъ Рисованія посредствомъ котораго всякій, даже неимѣющій понятія о рисованіи можетъ весьма легко, безъ всякій предварительной подготовки снимать копіи съ рисунковъ, картинъ, фотографическихъ карточекъ, гравюръ, портретовъ, и проч; совершенно сходныя съ оригиналомъ съ приложеніемъ Новаго Способа умноженія, который изучается въ 5 минутъ безъ помощи учителя великолѣпномъ кортонажѣ съ приборомъ и объясненіемъ, издан. 2-е, ц. 3 р., съ пересылкой

Практическія Врачебныя Наставленія Вступившимъ въ бракъ, содержащія въ себѣ правила физическихъ способностей въ брачной жизни до глубокой старости съ присовокупленіемъ описанія половой жизни женщины, сочиненіе доктора медицины Р. Фернау, издан. 4-е съ рисункам. ц. 1 р. 50 к. съ пересылкой.

О Зачатіи и Зарожденіи Младенцевъ, объ укрѣпленіи ослабѣвшихъ мужскихъ членовъ и объ излеченіи отъ онанизма какъ мужчинъ такъ и женщинъ, сочинен. полѣзное и понятное для всякаго, кто только желаетъ вполнѣ постигнуть эти важные предметы, сочиненіе доктора медицины и профессора Парижскаго университета Мореля де Рюбомира, издан, 3-е ц. 1 р. 50 к.

Сладострастіе и Истощеніе общедоступное изложеніе свѣхъ средствъ для совершеннаго излеченія венерической болѣзни во всѣхъ ея видахъ и проявленіяхъ, возстановленіе плодородія, леченіе безсилія и безплодія, возрожденіе утраченныхъ физическихъ силъ съ присовокупленіемъ рецептовъ лекарства для домашняго приготовленія, составилъ докторъ медицины и профессоръ П. Сорокинъ ц. 3 р. съ пересылкой.

Объ Онанизмѣ и Безсиліи, о средствахъ снова возстановлять и укрѣплять здоровье разстроенное онанизмомъ и безсиліемъ. сочиненіе доктора медицины А. Брауна, издан. 2-е, ц. 1 р. 50 к. съ пересылкой.

„Геморрой“. Коренное уничтоженіе болѣзни во всѣхъ ея видахъ и проявленіяхъ, новыя медицинскія средства доктора медицины К. Лебеля, издан. 2-е ц. 1 р, 50 к. съ пересылк.

Ремесленная книга содержащія въ себѣ слѣдующіа ремесла и искуства для самообученія: I портное мастерство, II. Сапожное мастерство, III. Столярное искусство, IV. Плотничное искусство, V. Токарное мастерство, VI. Механическое слесарное мастерство, VII. Переплетное и футлярное мастерство, съ 276 рисунками ц. 3 р.

Фотокопераватель. Домашній фотографическій аппаратъ для копераванія дома всякихъ фотографическихъ карточекъ, гравюръ, портретовъ, картинъ и проч; совершенно сходныхъ съ оригиналомъ съ приложеніемъ наставленія и фотограф. карточ. ц. 4 р. съ пересылк.

Опредѣленіе жизни, сочиненія доктора медицины и профессора Клодъ Бернара, перед. франц. Д. Корша, ц. 50 к. съ пересылк.

Новыя гадательныя карты знаменитой предсказательницы дѣвицы Ленорманъ, въ роскошной сюрпризной коробкѣ, ц. 1 р. 50 к.

Половое отправленіе человѣка. Анатомическае описаніе дѣтородныхъ органовъ и половыхъ частей; физіологія половой жизни, зачатія и зарожденія; краткое изложеніе сущности сифилитической болѣзни и послѣдніе выводы о средствахъ могущихъ предупреждать всякое зарожденіе, сочиненіе доктора медицины К. Реута, съ 24 рисунками, ц. 2 р. съ пересылк.

О физическихъ Супружескихъ отношеніяхъ мужчины и женщины съ показаніемъ наставленій какъ мужъ и жена должны вести себя въ этомъ случаѣ безъ вреда своему здоровью, сочиненіе доктора медицины А. Брауна, ц. 2 р. съ пересылкою.

Картины Послѣдствій Разврата или разрушительное вліяніе природы на людей предающихся любострастію, настольная книга для всякаго съ показаніемъ способовъ леченія болѣзней съ 12-тою картинами, издан. 2-е, сочиненіе доктора А. Лашерта, ц. 2 р. съ пересылк.

Лечебная книга тысяча новыхъ случайнихъ открытій исцѣленія хроническихъ и другихъ болѣзней съ присовокупленіемъ рсцептовъ лекарствъ для домашняго приготовленія, сочиненіе доктора медицины Ф. Ильинскаго, ц. 3 р. съ пересылк.

Практическій Ветеринарный Врачъ леченіе коровъ, лошадей, козъ, овецъ, собакъ, свиней и домашныхъ птицъ сь присовокупленіемъ конскаго знатока, составилъ профессоръ ветеринаріи Фишеръ въ зчаст. издан. 2-е ц. 3 р. съ пересылк.

Трактатъ о Зубахъ съ наставленіемъ относительно предохраненія возставленія и леченія ихъ, сост. дантисъ Декилъ ц. 50 к.

Съ Требованіями Гг. иногородные благоволять обращаться исключительно на имя *Христофаор Ивановича Петрова, С.-Петербургъ* Фонтанка, близь Англійскаго проспекта, домъ № 143, 16.

ՄԻ ՖՐԱՆՍԻՈՒՀԻ

Որ նոր է եկել Թիֆլիս և ՀԻՄՆԱՒՈՐԱՊԷՍ դիտէ Ֆրանսերէն, Գերմաներէն և Անգլիերէն ցանկանում է ՏՆԱՑԻՆ ՎԱՐԺՈՒՀՈՒ կամ ԸՆԿԵՐՈՒՀՈՒ պաշտօն ստանալ: «ԿՈՎԿԱՍ» հիւրանոց, № 29 սենեակ. կարելի է ՏԵՍՆԵԼ երեկոյեան 2 մինչև 5 ժամը:

1—4

Вышла изъ печати брошюра: „ЭКОНОМИЧЕСКІЕ ОЧЕРКИ ЭРИВАНСКОЙ ГУБЕРНІИ и ОЗЕРО ГОКЧА“. Продается во всѣхъ книж. магазинахъ Тифлиса по одному рублю за экземпляръ. Иногородные адресуютъ свои требованія: Тифлисъ, въ „Кавказскую книж. торговлю“. Захарію Петровичу Грикурову.

Դուրս եկաւ մամուլի տակից: «Տնտեսական տեղեկագրութիւն Երևանի նահանգի և Գեօկչայ լիճ.» անուանով ռուսերէն գրքոյկը: Վաճառվում է Տֆիլիսի բոլոր գրավաճառների մօտ: Գինն է մի ռուբլի հատը: Արդիւնքը յօգուտ «Արարատեան Ընկերութեան». Օտարաքաղաքացիք կարող են դիմել հեռաւոր հասցէով՝ Въ Тифлисъ, въ Кавказскую Книж. Торговлю Захарію Петровичу Грикурову.

Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ ԿՈՎԿԱՍ. ԳՐԱՎԱՃ.
ՆՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐԸ՝

1) Մամուլի տակ ընկաւ և 1880 թ. յունվարին լոյս կը տեսնի՝ ՂՈՒԿԱՍԵԱՆՑԻ—ընդհանուր պատմութեան հին դարը—ա. մն:

2) Շուտով մամուլի տակ կընկնի Զ. ԳՐԻԳՈՐԵԱՆՑԻ աշխատասիրութեամբ և հրատարակութեամբ Մարդակազմութիւն՝ մարդուս մարմինը, նորա կեանքը և խնամատարութիւնը—անունով պատկերազարդ գիրը:

3) Մամուլի տակից դուրս է եկել և արդէն վաճառվում է «ԾԵՐԵՆՑԻ—Երկունք 9-դ դարու» պատմական վէպը, որոյ գինն ամէն տեղ մի ռուբլի է:

Նոյն տեղը ստացուել է Բոստոմի (պ. ՏԷՐ-ԱԲՐԱՄԵԱՆԻ) օրացոյցը, երկու պատկերներով զարդարուած. գինն է 15 կ.:

7—10

ԲԺՇԿԱՊԵՏ ՀՅԵՄՐՕՄՍԿԻ վեներական և կաշու հիւանդութեանց ՄԱՍՆԱՎՈՐՅԱՆ բնակվում է Գանձակայա փողոցի վրա, **ԽՕՍՐՕՎԻ** տանը, № 9: **ՀԻՒՆԴԻՆԵՐԻՆ** ընդունում է առաւօտեան 8—9½ **ԺԱՄԸ** և երեկոյեան 4—6:

3—5

ԱՌԱՋԻԿԱՅ 1880 ԹԻՈՒՄ ԿԸ ՏՊԱԳՐՎԻ

„ԿԱՅԾԵՐ“

ՎԷՊ ՏԱՃԿԱՍՏԱՆԻ ՀԱՅՈՑ ԿԵԱՆՔԻՑ

Հեղինակութիւն ՐԱՖՖԻ

Վէպը բաղկացած կը լինի երկու առանձին հատորներից, իւրաքանչիւրը կը բովանդակէ մօտաւորապէս 400 տպագրված երեսներ: Ամեն մէկ հատորի գինն է 1 ր. 50 կ., իսկ միասին 3 ր.: Մէկ հատորի համար առանձին ստորագրութիւն չէ ընդունվում: Ստորագրվել կարելի է ԳԻՒՐՈՆԵՐՈՒՄ այն պարոնների մօտ, որոնք բարեհաճել են բաժանորդներ հաւաքել «ԿԱՅԾԵՐԻ» տպագրութեան համար, իսկ ԹԻՖԼԻՍՈՒՄ պէտք է դիմել «Մշակի» խմբագրատանը Յ. ՄԻՆԼԻՔ-ՅԱԿՈԲԵԱՆԻՆ:

ՓՈՐՁ

ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՀԱՆԴԷՍ

1880 թ.

(Չորրորդ տարի)

Չորրորդ շրջանի մէջ ևս «ՓՈՐՁԸ» կը հրատարակուի մի և նոյն հոգւով և ուղղութեամբ և նոյն ծրագրի համեմատ ինչպէս և առաջին երեք տարիները:

ՀԱՆԴԷՍԸ ԼՈՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ ԱՄՍԷ ԱՄԻՍ:

Իւրաքանչիւր համարի տպագրական թերթերի թիւը լինելու է 12-ից մինչև 15. Ամբողջ տարին կազմում է չորս մեծադիր հատոր, ամեն մէկը աւելի քան 600-700 երեսից բաղկացած:

«ՓՈՐՁԻ» բաժանորդագինը ամենայն տեղ տասը ռուբլի է:

Հոգևորականները Կոնսիստորիայի միջնորդութեամբ, իսկ ուսումնարանները և ուսուցիչները թեմական վերատեսչի պատասխանատուութեամբ կարող են մաս առ մաս վճարել, այն է:

Ստորագրելու ժամանակ—4 ռուբլի, մայիսի 1-ին 3 ռուբլի և սեպտեմբերի 1-ին 3 ռուբլի:

Այն անձինք, որոնք միանուագ չէն կարող վճարել բաժանորդագինը դիմում են իւրեանց պայմաններով խմբագրին:

Ստորագրուել կարելի է Տփխիսում՝ «ՓՈՐՁԻ» խմբագրատան մէջ և Կենտրոնական գրավաճառանոցում: Կ. Պոլսում՝ մեծ. Պետրոս էֆ. Վասիլեանի մօտ. Ղալաթիա Կէօզէ օղու խան, մաքսատան դիմաց. Զմիւռնիայում՝ գեր. Մելքիսեդէկ եպիսկոպոս Մուրադեանի մօտ իսկ Ասիական Տաճկաստանում մեծ. Լ. Մուրադեանի մօտ, Սամսոն:

$18^{76}/_{77}$, $18^{77}/_{78}$ և 1879 թ. «ՓՈՐՁԸ» կարելի է ստանալ խմբագրատան մէջ իւրաքանչիւր շրջանի համար 10 ռուբլի հատուցանելով:

Նոր բաժանորդները առաջին փոստայով ստանում են բոլոր լոյս տեսած համարները:

Օտար քաղաքացիք կարող են դիմել խմբագրին հեռաւոր հասցէով—Тифлисъ. Въ Редакцію Армянскаго журнала „ПОРДЗЪ“, իսկ արտասահմանից—Tiflis. Redaction du journal Arménien „PORDZ“.

Խմբագիր-Հրատարակիչ ԱՐԳԱՐ ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ

ОТКРЫТА ПОДПИСКА НА ГАЗЕТУ

„КАВКАЗЪ“

на 1880 годъ, на слѣдующихъ условіяхъ:

СРОКИ.	Съ достав. въ Тифлисѣ. Руб.	Коп.	Съ пересылкою иногород, Руб.	Коп.
На годъ	11	50	13	—
На полгода	6	—	7	—
На три мѣсяца	3	50	4	—
На одинъ мѣсяцъ	1	50	1	75

Подписка принимается въ г. Тифлисѣ, въ конторѣ газеты *Кавказъ*, на Барятинской улицѣ, въ домѣ подъ № 4. Иногородные адресуютъ свои требованія: въ Тифлисъ, въ редакцію газеты *Кавказъ*.

1880 թ-ին, Յունվար ամսից ՏԱՐՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՈՒՄԸ կը բացվի ՊԱՆՍԻՕՆ որոյ մէջ կընդունվեն գիշերօթիկ և կիսագիշերօթիկներ 7 տարեկան հասակից: Այս ուսումնարանի նպատակն է պատրաստել երեխանցը առաջին և երկրորդ դասատան արքունական դպրոցների համար:

Տարրական ուսումնարանն ունի բաժանում, որ անուանվում է ՄԱՆԿԱԿԱՆ ՊԱՐՏԷԶ, որի մէջ ընդունվում են երեխայք 4-ից մինչև 7 տարեկան հասակը:

Օտարաքաղաքացիք պայմանները իմանալու կարող են դիմել այս հասցէով:

ТИФЛИСЪ
Басрату Мириманову
Дѣтскій садъ и элементарная школа, Вельяминовская улица д. кн. Аматуни.

Дозволено Цензурою 20 Декабря 1879 г. Тифлисъ. Տպարան Ա. Ա. Միխելսոնի Типографія А. А. Михельсона